ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«04» հոկտեմբերի 2023թ. ՆՄՈ/590-2023

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐՄԱՎԻՐԻ Ռ. ԵՂՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ N1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N1 հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետով և 18-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 6.4.1-ին կետի պահանջները.

**որոշում եմ՝**

1. 2023 թվականի հոկտեմբերի 20-ին «Արմավիրի Ռ. Եղոյանի անվան N1 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով:

2. Ուսումնավարժությանը նախապատրաստվելու և այն արդյունավետ անցկացնելու նպատակով սահմանել՝

1) ուսումնավարժության ղեկավար հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը.

2) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Առնակ Ավետիսյանը.

3) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, գնդապետ Հովհաննես Մարգարյանը:

3. Հաստատել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

4. Հաստատել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 2 հավելվածի:

5. Ուսումնավարժությանն ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը.

2) Արմավիրի թիվ 27 հրշեջ-փրկարարական ջոկատից 2 (երկու) մարտական հաշվարկ.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Մուսալեռ» մասնաճյուղի Արմավիրի էլեկտրական ցանցից 1 (մեկ) մասնագիտացված խումբ.

4) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի գազամատակարարման և գազաֆիկացման մասնաճյուղից 1 (մեկ) վթարային խումբ.

5) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնից 1 (մեկ) վերակարգ.

6) «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շտապ բժշկական օգնության ծառայությունից մեկ գծային բրիգադ.

7) «Արմավիրի Ռ. Եղոյանի անվան N 1 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրինությանը, ուսուցչական կազմին:

6. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

2) կազմակերպել համագործակցությունն ուսումնավարժության ղեկավարման շտաբի և ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

3) ուսումնավարժության անցկացման պատրաստության մասին զեկուցել 2023 թվականի հոկտեմբերի 18-ին:

7. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել ուսումնավարժության անցկացման համար սահմանված փաստաթղթերի ժամանակին մշակումը.

2) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

8. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան փոխգործողությունների պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով և սարքավորումներով.

3) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) ուսումնավարժության ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները, չվնասել պետական և մասնավոր գույքը.

5) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Առնակ Ավետիսյանին:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

05.10.2023

X

VERIFIED OCSP 05.10.2023 11:34:53 GMT+4

**ՄԱՐԶՊԵՏ՝**
**Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված N2
ՀՀ Արմավիրի մարզպետի
2023 թվականի հոկտեմբերի «04»-ի
NՄՈ/590-2023 որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՅՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ- ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետները | Պատասխանատու կատարողներ | Նշ.կա-տարման մասին |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | 1. Փաստաթղթերի մշակում | | | |
| 1. | Եկակետային տվյալների որոշում՝ վայր, մտահղացում, մասնակիցների կազմ, անցկացման կարգ | մինչև 27.09 | Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբ | |
| 2. | Մտահղացման սխեմայի մշակում | մինչև 05.10 | Ղեկավարման շտաբ | |
| 3. | Ցուցադրական ՀՏՈՒ-ի անցկացման պլանի մշակում | մինչև 06.10 | Ղեկավարման շտաբ | |
| 4. | Ցուցադրական ՀՏՈւ-ի փաստաթղթերի հաստատման ներկայացում | մինչև 12.10 | Ղեկավարման շտաբի պետ | |
| | 2. Ղեկավար կազմի նախապատրաստում | | | |
| 5. | ՀՏՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում | մինչև 13.10 | Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբ | |
| 6. | «Որոնողափրկարարական աշխատանք ների կազմակերպման կարգը հաստա-տելու մասին» ՀՀ կառավարության 08.06. 2010թ. N 855-Ն որոշման ուսումնասիրում | մինչև 16.10 | Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբի պետ | |
| | 3. Ուսուցանվողների նախապատրաստումը | | | |
| 7. | ՈՒսումնավարժության փաստաթղթերի փաթեթի ծանոթացում մասնակիցներին իրենց առնչվող մասով | մինչև 17.10 | Ղեկավարման շտաբի պետ | |
| 8. | Փոխհամագործակցության պլանների ճշգրտում | մինչև 17.10 | Ղեկավարման շտաբ, համապատասխան ծառայությունների պետեր | |
| 9. | Ուսումնավարժությանը ընդգրկվող տրանսպորտային միջոցների և համապատասխան գույքի ու տեխնիկայի վիճակի ստուգում: | մինչև 18.10 | Համապատասխան ստորաբաժանման հրամանատար | |
| 10. | Անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում | մինչև 18.10 | Համապատասխան ստորաբաժանման հրամանատար | |
| | 4. Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում | | | |
| 11. | Ուսումնավարժության վայրի տեղազննում | մինչև 18.10 | Ուսումնավարժության ղեկավար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Ղեկավարման շտաբի պետ | |
| 12. | Գործնական միջոցառումների վայրի նախապատրաստում | մինչև 19.10 | Գործնական միջոցառումների խմբի ղեկավար | |
| 13. | Փրկարարական գույքի, փոքր մեխանի-զացիայի, բուժօգնության միջոցների նախապատրաստում | մինչև 19.10 | Գործնական միջոցառումների խմբի ղեկավար | |

**Գլխավոր քարտուղար՝** **Ա․Հովհաննիսյան**

Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2023 թվականի հոկտեմբերի «04»-ի
ՆՄՈ/590-2023 որոշման

# ԿԱԶՄ
# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ « ԱՐՄԱՎԻՐԻ N 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

| Հ/Հ | Ազգանուն, Անուն, Հայրանուն | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| 1. | Հովհաննես Ալբերտի Մարգարյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ |
| 2. | Ջոնիկ Հենրիկի Բարսեղյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի խաղարկման և վերլուծման խմբի ղեկավար՝ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, փ/ծ փոխգնդապետ |
| 3. | Գառնիկ Կառլենի Ղուկասյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի խաղարկման և վերլուծման խմբի անդամ՝ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր |
| 4. | Սևակ Գրգորի Հովհաննիսյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի խաղարկման և վերլուծման խմբի անդամ՝ Արմավիրի ՄՓՎ ԲՊԲ փ/ծ մայոր |
| 5. | Մուշեղ Աշոտի Պետրոսյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար՝ Արմավիրի ՀՓՋ հրամանատար, փ/ծ մայոր |
| 6. | Գառնիկ Վաչագանի Մկրտչյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ՝ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր |
| 7. | Ավետիք Վահենի Հարությունյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ՝ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀավագ հրահանգիչ, փ/ծ մայոր |

**Գլխավոր քարտուղար՝** **Ա.Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 04.10.2023 17:36:56 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷՐՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«04» «հոկտեմբերի» 2023թ.

**Պլան**

**Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման**

<u>Թեմա՝</u> «Հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում»:

<u>Ուսումնական նպատակները</u>

1. Ստուգել և կատարելագործել արձագանքող ուժերի և կազմակերպության կազմավորումների գործնական հմտությունները որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման դեպքում:

2. Արձագանքող ուժերի և կազմակերպության կազմավորումների միջև փոխհամագործակցության կազմակերպումը և գործողությունների ներդաշնակումը:

<u>Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝</u> ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչություն, Արմավիրի թիվ 27 հրշեջ փրկարարական ջոկատից 2 (երկու) մարտական հաշվարկ, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնից 1 (մեկ) պարեկային խումբ, «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ բուժօգնության ծառայությունից 1 (մեկ) գծային բրիգադ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի Արմավիրի էլեկտրոցանցից 1 (մեկ) վթարավերականգնողական խումբ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի գազամատակարարման և գազաֆիկացման մասնաճյուղից 1 (մեկ) վթարային խումբ և «Արմավիրի N 1 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի կազմավորումներ:

<u>Տևողությունը՝</u> 20.10.2023թ. ժամը 12:00-13:20:

<u>Անցկացման վայրը՝</u> « Արմավիրի N 1 ավագ դպրոց » ՊՈԱԿ:

**Ուսումնավարժության մտահղացում՝**

«Արմավիրի N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ն ունի 4 մասնաշենք: Մասնաշենքերը երկհարկանի են, կառուցված են քարից և երկաթբետոնյա կոնստրուկցիաներից: Դպրոցը ունի էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, ջեռուցման տեղային համակարգ: Ուսումնակրթական գործընթացը կազմակերպվում է մեկ հերթափոխով: Աշակերտների թիվը՝ 550, իսկ աշխատակազմի թիվը՝ 83 մարդ:

<u>Ստեղծված իրավիճակը.</u> ս.թ հոկտեմբերի 20-ին ժամը 11:55-ին երրորդ մասնաշենքի հիմքային մասի թուլացման պատճառով տեղի է ունեցել հիմնական ամրաններից կոնստրուկցիաների անջատում, որի հետևանքով աստիճանավանդակները մասնակի փլուզվել են: 1-ին հարկի դասասենյակներից մեկում 10 աշակերտ հայտնվել են արգելափակման մեջ, որոնցից 3-ը ունեն մարմնական վնասվածքներ: Էլ. լարերի կարճ միացումից 2-րդ հարկում հրդեհ է բռնկվել, 2-րդ հարկում կա 1 աշակերտ, կաթսայատան մոտ վնասվել է գազի խողովակը, առկա է գազի արտահոսք:

Որոնողափրկարարական, հրդեհաշիջման և վթարավերականգնողական աշխատանքների անվտանգ իրականացման համար անհրաժեշտ է հոսանքազրկել դպրոցի շենքը:

## ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

| Հ/հ | ԺԱՄԱՆԱԿԸ (աստղաբաշխական) | ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | 12:00-12:05 | Ազդարարում, արձագանքման կազմակերպում | Տալիս է կարգադրություն մասնակիցների ազդարարման և արձագանքման կազմակերպման վերաբերյալ | Դպրոցի տնօրենը իրականացնում է անձնակազմի ազդարարում և զանգում է «911» ծառայություն: ՄԾԿԿ-ն ստանալով ահազանգը սահմանված կարգով իրականացնում է մասնակիցների ազդարարումը, ինչպես նաև դեպքի վայր է մեկնում Արմավիրի ՄՓՎ Օխ և Արմավիրի ՀՓՋ-ից երկու մարտական հաշվարկ: |
| 2 | 12:05-12:15 | Դպրոցի անձնակազմի տարահանում, տուժածներին առաջին բուժօգնության ցուցաբերում | Հետևում է կազմավորումների գործողություններին | 1. Դպրոցի տարահանման հանձնաժողովը իրականացնում է անձնակազմի և աշակերտների տարահանումը:<br>2. Դպրոցի փրկարարական կազմավորումը 1-ին ուսումնական կետից՝ դպրոցի շենքի 1-ին հարկից դուրս է բերում սպորտդահլիճում արգելափակման մեջ հայտնված 7 աշակերտների և 3 տուժածների. որոնցից՝<br>• առաջինին՝ ոտքի կոտրվածքով, դուրս է բերվում պատգարակով,<br>• մյուս երկուսին՝ ձեռքերի և գլխի հատվածում թեթև վնասվածքներով՝ դուրս է բերվում օգնելով:<br>Դպրոցի սանիտարական խումբը տուժացներին ցուցաբերում է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | առաջին բուժօգնություն: |
| 3 | 12:15 | Արձագանքող ուժերի ժամանում | | Արձագանքող ուժերը ժամանում են դեպքի վայր: |
| 4 | 12:15-12:20 | Հետախուզության կազմակերպում և իրականացում | Ներկայացնում է ստեղծված իրավիճակը և տալիս կարգադրություն հետախուզություն անցկանելու վերաբերյալ | Արմավիրի ՀՓՋ-ի մարտական հաշվարկները իրականացնում են ընդհանուր հետախուզություն և ներկայացնում առաջարկություններ հրդեհաշիջման, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների համար պայմանական վթարային գոտին բաժանել ուսումնական կետերի:<br>• 1-ին ուսումնական կետում իրականացնել որոնողափրկարարական, տարահանման և հրդեհաշիջման աշխատանքներ,<br>• 2-րդ ուսումնական կետում ծավալել բուժ կետ,<br>• 3-րդ ուսումնական կետում իրականացնել վթարավերականգնողական աշխատանքներ,<br>• Բոլոր ուսումնական կետերում իրականացնել հասարակական կարգի պահպանման միջոցառումներ: |
| 5 | 12:20-12:25 | Շարժական կառավարման կետի ծավալում | Կազմակերպում է փրկարարական աշխատանքների ղեկավարման շարժական կառավարման կետի ծավալումը | ՄՓՎ-ն ծավալում է փրկարարական աշխատանքների ղեկավարման կառավարման կետ:<br>Կառավարման կետում որոշվում է ուժերի կենտրոնացման հիմնական ուղղությունները, ուժերի և միջոցների բաշխումը ըստ աշխատանքային կետերի: |
| 6 | 12:25-13:00 | Որոնողափրկարարական, հրդեհաշիջման, առաջին բուժօգնության ցուցաբերման, վթարավերականգնողական, հասարակական կարգի պահպանման աշխատանքների իրականացում | Տալիս է կարգադրություն որոնողափրկարարական, հրդեհաշիջման, առաջին բուժօգնության ցուցաբերման, վթարավերականգնողական և հասարակական կարգի պահպանման աշխատանքների իրականացման վերաբերյալ | **1-ին ուսումնական կետ** (Դպրոցի երրորդ մասնշենքի 2-րդ հարկում) հրդեհ է բռնկվել, առկա է նաև ծխապատ գոտի, 1 աշակերտ մնացել է ներսում, որն էլ չի կարողանում ինքնուրույն դուրս գալ ծխապատ գոտուց:<br>Արմավիրի ՀՓՋ-ի մարտական հաշվարկն իրականացնում է հետախուզություն, մարտական բացազատում և հրդեհաշիջում՝ օգտագործելով մեկուսացնող հակագազեր: 3 հրշեջ փրկարարներ իրականացնում են որոնողական աշխատանքներ և ծխապատ գոտում հայտնաբերելով խոճապահար աշակերտին տարահանում են: |
| | | | | **2-րդ ուսումնական կետ.**<br>Արմավիրի բժշկական կենտրոնի բուժաշխատողները և շտապ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | օգնության անձնակազմը դպրոցի հարակից տարածքում ծավալում են բժշկական տեսակավորման կետ և իրականացնում տուժածների ընդունման, տեսակավորման, բժշկական օգնության ցուցաբերման և համապատասխան մասնագիտացված բժշկական հաստատություններ տեղափոխման միջոցառումները: |
| | | | | **3-րդ ուսումնական կետ.** Արմավիրի ՇԷՑ-ի վթարավերականգնողական խումբը դպրոցի շենքին հարակից գտնվող էլեկտրական ենթակայանից դադարեցնում է դպրոցի էլեկտրամատակարարումը՝ փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների անվտանգ իրականացման համար: Դպրոցին հարակից գտնվող կաթսայատան գազատար խողովակաշարը վնասվել է, ինչի հետևանքով առաջացել է գազի արտահոսք: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ վթարային խումբը դադարեցնում է գազի արտահոսքը և իրականացնում զոդման աշխատանքներ: |
| | | | | Բոլոր ուսումնական կետերում և հարակից տարածքներում ոստիկանության հաշվարկները իրականացնում են երթևեկության սահմանափակման և հասարակական կարգի պահպանության միջոցառումներ: |
| 7 | 13:00-13:20 | Ուսումնավարժու-թյան արդյունքների ամփոփում և ավարտ | Ամփոփում է ուսումնավարժության արդյունքները, գնահատում է ուսուցանվողների գործողու-թյունները, նշում է ուժեղ և թույլ կողմերը, տալիս է հանձ-նարարականներ թերություն-ների վերացման ուղղությամբ և հայտարարում ուսումնա-վարժության ավարտ: | Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը: |

ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ պետ, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

փ/ծ գնդապետ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ